Քննարկվել և հավանության է արժանացել
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի
«15» 04 2020 թ. № 10 նիստում

Հաստատվել է՝
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
կառավարման խորհրդի «04» 05 2020 թ.
N 3-21 նիստում, նախագահի _____ Ա. Նաղդալյան
/ստորագրություն/

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՍՆ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ–Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ /ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ/

1. Ընդհանուր դրույթներ

1.1 <<Չարենցավանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ քոլեջ) տնտեսական մասը առանձին կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է ՀՀ օրենսդրությանը և սույն կանոնակարգին համապատասխան:

1.2 Տնտեսական մասը կարող է վերակազմավորել կամ լուծարվել քոլեջի տնօրենի ներկայացմամբ, կառավարման խորհրդի որոշմամբ:

1.3 Սույն կանոնակարգը կարող է փոփոխվել կամ լրացվել քոլեջի կառավարման խորհրդի որոշմամբ:

2.Տնտեսական մասի խնդիրները

2.1Տնտեսական մասի խնդիրներն են .

ա/ իրականացնել քոլեջի և նրա առանձին ստորբաժանումների տնտեսական սպասարկման աշխատանքների ղեկավարում,

բ/ ապահովել քոլեջի տնտեսական գույքի պահպանությունը, դրանց վերականգնումը և համալրումը, ինչպես նաև շենքի, շինությունների և դրանց հարող տարածքների մաքրությունը,

գ/ հետևել քոլեջի տեխնիկական և սանիտարական վիճակին և միջոցներ ձեռնարկել դրանց ժամանակին վերանորոգման համար,

դ/ քոլեջի վարչական և ուսումնական ստորաբաժանումներին, համաձայն ներկայացվող պահանջների, ապահովել գրասենյակային և այլ պարագաներով ու գույքով, ինչպես նաև առօրյա տնտեսական ապրանաքներով,

ե/ քոլեջի ջեռուցման ժամանակաշրջանում ամենօրյա ուշադրություն դարձնել և հսկողության տակ պահել էլեկտրական հոսանքի հետ կապված հարցերը և հսկել անվտանգության կանոնների պահպանման գործընթացը,

զ/ քոլեջում անվտանգության ժամանակակից միջոցներ ներդնել և աշխատանքի անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմաններ ստեղծել,

է/ քոլեջի տնօրենի հրամանի համաձայն կազմակերպել նյութական արժեքների գույքագրում և տնօրենին ներկայացնել բարոյապես և տեխնիկապես մշակված գույքի մասին,

ը/ աշխատանքային փոխադարձ կապի պահպանում կոյուղու, կոմունալ, էլեկտրասպասարկման, ջրամատակարարման և մյուս շահագրգիռ ծառայությունների հետ և միջոցառումների ձեռնարկում նշված ծառայությունների վթարային դեպքերը շտկելու ուղղությամբ,

թ/ հայտնաբերում և տնօրենին է ներկայացնում քոլեջի տեխնիկական և ընդհանուր վիճակում տեղ գտած թերությունները:

3. Տնտեսական մասի կառուցվածքը և կառավարումը

3.1 Տնտեսական մասը անմիջականորեն ենթարկվում է տնօրենին:

3.2 Տնտեսական մասը ղեկավարում է տնտեսվարը, ում աշխատանքի ընդունում և ազատում է քոլեջի տնօրենը:

3.3 Տնտեսական մասի կազմի մեջ մտնում են՝ գիշերապահները, հավաքարարները:

3.4 Տնտեսվարը՝

ա/ կազմակերպում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է տնտեսական մասի ընթացիկ գործունեությունը,

բ/ ապահովում է տնտեսական մասի հիմնական խնդիրների իրականացումը, լուծում է դրանցից բխող հիմնախնդիրները, աշխատակիցներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ և հետևում է դրանց կատարմանը,

գ/ մասնակցում է հրավիրված նիստերին: